



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 22

ՃԱՐԱՐ

27 ՅՈՒՆԻԱՐ 1907

Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ	ԳԱԽԱՌԱՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆԻՅ
Տարեկան 50 Ղրշ.	Տարեկան 54 Ղրշ.	Տարեկան 42 Ֆր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

Զ Ե Ն Ի Թ

Իր ամէն մասանց մէջ կատարելապէս խնամուած միակ ժամացոյցը զոր կարելի ըլլայ յանձնարարել և երաշխաւորել այն բացարձակ ճշտութեան համար՝ որ իր յատկանիշն է:

ՄԵՍ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՉ 1900.

ԱՐՏԱՔՈՅ ՄՐՑՄԱՆ ՄԻԼԱՆ 1906,

Հանդերձ ժիւղի անդամակցութեամբ.

Թուրքիոյ և բովանդակ Արեւելքի համար միակ ներկայացուցիչը

Գ. ՍԱՐԳԻՍՕՖ Ե Ի ԸՆԿ

Մեծ մթերանոց ամէն տեսակ ժամացոյցներու, չղթաներու և գոհարեղէններու.

Կ. Պոլիս, Պադի-գաթու, Օոգոսի-Պաֆ (Էօսկր-Էֆէնի) վաճառատան դիմաց Թիւ 16,


ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(آ. آهادریان) شرکت مکتبه مطبعه — باب عالی جاده سنده نومرو ۵۷

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Այի ճառասէսի Թիւ 52

Հատը 40 փարա



Չե՞րքի, ո՞սքի ու ո՞սքի եւ ձեռքի
 [փանգամայն մեքենաներ
 է կը գտնուին

Սինկերերի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
 բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
 մեքենայ մը շանթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
 ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
 եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅՈՒՆԻ ԿԱՅԸ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարի լազործուածը,
 հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախոին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

Սինկերի մեքենաները

ԲԵՐԱ

- (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .
- (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

- (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը.
- (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

- (1. Սուլթան համամ .
- (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 .

ՍԱԻԻՏԱՐ

2արշը Պօյու, թիւ 120 .

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնագիտօրէն գաւառներու բոլոր քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ
 343 կրկին, Տիւզզուլուի տունը:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 22

ՇԱՐԱԹ

27 ՅՈՒՆՈՒԱՐ 1907

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄԸ

Նախապաշարումը հին դարերէ ի վեր իր գոյութեան արմատը կապած է թէ՛ ազգերու և թէ՛ ժողովուրդներու հոգեկան ձգտումներուն մէջ։ Ըլլան քաղաքակրթեալ կամ կռապաշտ, ըլլան ուսեսալ կամ անուս, գրեթէ նախապաշարումի դրոշմը կը կրեն իրենց ճակտին վրայ և կամ անոր ազդեցութիւնը իրենց կեանքի ամբողջ տեւողութեանը մէջ առաջնորդողի դեր կը կատարէ։

Եւ արդէն ի՞նչ է նախապաշարումը եթէ ոչ գոյութենէ բոլորովին զուրկ իրողութիւններ, որոնք իրենց աւերիչ դերը կը կատարեն անհատին թէ հոգեկան, թէ մտաւորական և թէ ֆիզիքական զարգացմանը մէջ։ Այսօր

գիտութիւնը որ հսկայաքայլ կը յառաջդիմէ, բնա՛ւ չ'ընդունիր այդ տեսակ գոյութիւն մը, ու իր գիտական սա և նա բաները չը ձեւեր նախապաշարումի հիման վրայ, այլ՝ իրերը իրենց ներկայ վիճակէն դատելով կը յառաջացունէ զործ մը՝ որ մարդկութեան օգտին և կամ բարեւթամանը կը ծառայէ։

Այսօր շատեր իսկ իրենց զգացումները կը կապտեն երեւակայութեան այդ ձայնին անսալով որ դարերէ ի վեր կը հնչէ ականջներու։

Այս քանի մը տողերը զորս հոս գըրելու ինծի թելադրեցին, նախապաշարումի այն մէկ ձեւն էր որով ծնողք-

ներ չըթուներնեան ծայրը ունին իրենց տղոց ամուսնութեան առթիւ երբոր յարմար կենակից մը փնտռելու կ'ելլեն :

Երբոր կ'առաջարկուի իրենց այսինչ աղջիկը որ վառվռուն ձեւեր և կամ համարձակախօս է, անմիջապէս կը պատասխանեն « առիկայ բաց աղջիկ է, աղջիկ մը պէտք է ծանր ըլլայ » :

Սակայն կը զարմանամ թէ աղջիկ մը որ ներքնապէս ամէն առաքինութիւններով օժտուած է, և իր վրայ կը մարմնացնէ տուն մը կառավարելու ամէն յատկութիւնները, և քանի որ բնութիւնը օժտած է զայն ամէն արտաքին այն յատկութիւններով որոնք զինքը հրապուրիչ կրնէ, պէտք է ուրեմն զրկել զայն իր օրինաւոր իրաւունքէն միակ սա պատճառաւ թէ նախապաշարումը այդ տեսակ աղջիկները անբարոյ կը ճանչնայ, թէ այդպիսիները բաղդէ լքուածներ սեպուելով, պէտք է իսպառ իրենց ծնունդը ողբան :

Անշուշտ ըսել չենք ուզեր թէ այն ամէն աղջիկները որոնք համարձակ են պէտք է անխտրաբար և կամ առանց այլ եւ այլի ամուսնութեան իբր տիպար թեկնածուներ ճանչնալ : Բացառութիւնները պէտք է յարգուին : Սակայն ինչ ընէ աղջիկ մը որ բնատուր գեղեցկութեամբ մը ու վառվռուն ձեւերով օժտուած ըլլալու անբաւելի մեղքը ունեցած է ! Ընդհանրապէս այդպիսիներուն արտաքինը ճիշտ իրենց ներքինը կը պատկերացնէ :

Պէտք չէ խաբուիլ այնպիսի ծանր ու խոհեմ կարծուած կարգ մը աղջիկներէ, որոնց ներսը շատ անգամ թունալից օձեր պառկած են, և քօղերու տակ գրեթէ միշտ գետնաքարչ զգա-

ցումներ կը մշակեն, և որոնք շատ հեղ իրենց ամուսնութենէն վերջ կ'սկսին դուրս թափել, այն մաղձը՝ ենթական թշուառութեան անվերջ օղակաւորումի մը մէջ կաշկանդելով :

Ինչպէս որ բնութիւնը գարնան կենսարար ճառագայթներէն կը վերկենցայի ու մթնոլորտին մէջ տարածուած զգիլիչ բոյրերու հետ կենդանութեան ու վառ կեանքի մը թարմ շունչերը կը հեւան, և ուր տեղ ծաղիկներու երփներանգ գոյներով կետկիտուած պարտէզներու կամ գաշտերու ակնախտիչ համայնապատկեր մը պարզուելով մարդկային հոգիներու վրայ ցնցող ազդեցութեան մը հմայքը կը կաթեցունէ, նոյնպէս ալ աղջիկ մը երբոր իր կեանքի գարունին մէջ կը գտնուի, երբոր կ'զգայ յորդառատ զգացումներու զեղումը իր կոյս սրտին մէջ, և քանի որ դեռ վշտի մութ ամպերու յորդ կուտակումներ չեն մթազնած անոր երեւակայութեան պայծառ հորիզոնը, պէտք է իր դէմքին վրայ ժպիտի ու ուրախութեան ցոլքեր ծիածանումներով պատկերուին : Եւ արդէն ինչպէս կրնանք պահանջել այդչափ ծանրութիւն, լրջախոհութիւն մէկէ մը այնպիսի տարիքի մէջ՝ որուն երիտասարդական առողջ արիւնը կ'եռայ և ինչ որ կ'ընէ միայն իր զգացումներուն ձայնին հնազանդելով է : Եւ չէ՞ մի որ ժամանակը արդէն լռիկ մնչիկ պիտի կատարէ իր գործը տակաւ ընդարմացունելով այն զգացումները՝ որոնք երբեմն երիտասարդութեան ժամանակ տաքութեան ամենէն բարձր աստիճանին հասած էին :

Պէտք է քիչ մը շրջահայեաց ըլլանք, և խուսափինք նախապաշարումի այդ հնաբոյր ձեւակերպութիւններէն :

Ք Ր Ո Ն Ի Կ

Տարւոյն է՛ն փայլուն, է՛ն շատ ոգեւորուած, ամենէն աւելի հրատապ փուլին մէջ կը գտնուինք այս պահուստ: Դեկտեմբերի կէսէն սկսեալ մինչեւ այսօր տօներու, հանդէսներու համով շարք մըն է որ կերկարի, որու միջոցին մենք զմեզ կը մոռնանք, հըրճուանքէ կը գինովեանք, և վայրկեան մը կը վանենք բոլոր վշտոնցնող տափակութիւնները կեանքին:

Սեզօնը շատ ազուրկ կսկսի և ապահովապէս այսպէս պիտի երթայ մինչեւ Մեծ Պահք:

Զբօսանքներուն առատութիւնը և զանոնք վայելելու համար մեր ունեցած փութկոտութիւնը պահ մը մոռցնել տուին մեզի թէ այս պարտհանդէսներէ դուրս, այս երեկոյթներէ հեռու իրական կեանքը կայ, իր հնչունքներովը լեցուն և կենսապայքարը բան մը չէ կորսնցուցած իր կրողը-տանելիք անհրաժեշտութենէն:

Հոս ուրիշ բաներ ունինք ընելիք: Երբ ստիպուած ես օրուան մէջ երեք չորս անգամ հագուստ փոխել, գործի հագուստէն ետքը à taille կրկնոցդ, ասորմէ անմիջապէս ետքը smokingը ասոր ալ յաջորդ տալու համար habitդ, երբ պարտաւոր ես օրը կէս ժամ զոհել ածիլուելու համար, այնքան ժամանակ ալ օձիքդ կոճկելու և կրկինը հայելիիդ առջեւ ծեքծեքելու, երբ դատապարտուած ես հոս ու հոն այցեքարդեր ղրկելու, դեռ մնաւ չլլալդ ասոր անոր հասկցնելու համար, երբ անքաղաքավար չերեւնալու համար կը հարկադրուիս օրուան մէջ չորս հինգ այցելութիւններ ընել եղած հրաւերի մը փոխադարձ վիզիթդ տալու, այսինչին և այնինչին անուան տօնը շնորհաւորելու և կամ տիկին Ք...ի առողջութեան վրայ տեղեկութիւններ առնելու համար, այս բաբբրսիին մէջ և ոչ մէկը իրաւունք ունի քեզ դատապարտելու որ Բիւզանդիոն չեա կարդար, ձեռք չեա առներ Արեւելքը ևլն. ևլն.:

Երբ երէկ գիշեր այնքան սիրուն բաներ ըսած ես գեղանի տիկնոջ մը, և քաջաբերական պատասխաններ առած իրմէ, երբ այս գիշերուան համար խօսք առած ես օրիորդէ

մը ... սանճուիչ մը միասին խածնելու, այս հոգեկան տագնապիդ միջոցին, գիմացինդ ապուշ ըլլալու է քեզի հարցնելու համար թէ ինչ կը մտածես բամպակի բարձրացման, Պոլսոյ սնանկութիւններուն և Մ. Շամտան-ճեանի վերջին յօդուածին վրայ:

Ամսէ մը ի վեր գրեթէ ասանկ վերացական կեանք մը անցնելու վրայ եմք:

Երբ աշխարհիկ կեանքի վրայ կը խօսիմ, դիտաւորութիւնս carnet mondain մը յօրինել չէ և ոչ ալ մտքէս կանցնի réclamer ընել բոլոր այն հանդէսներուն՝ որոնք տրուեցան և կամ պիտի տրուին: Ատկէ աւելի օգտակար բան մը ընելու մարմա՞ս է որ կը մղէ զիս քանի մը դիտողութիւններ մէջտեղ դնել, որոնց ընթերցումը կրնայ տեսակ մը դժգոհանք պատճառել ասոր կամ անոր:

Շատ լուրջ, խիստ դժուար քննութիւն մը և մանրազնին ուսումնասիրութիւն մը միայն կարելի պիտի ընէին փնտել բոլոր այն պատճառները՝ որոնց երեսէն մեր կենցաղի տութիւնը, savoir vivre, galanterie, աշխարհիկ կեանքի ուսմունքը երթալով նսեմանալու վրայ է, և հասցուցած են մեզ այն պիճակին՝ որու շարունակութիւնը կրնայ շատ տգեղ կերպով համեմատիլ մեր քաղքենիի առաւելութիւններուն, մեր առած ուսմունքի չափին և մեր օրուան մարդեր ըլլալու փափաքին հետ: Դիտած եմ դժբաղդաբար թէ մեր մէջ կենցաղագիտութիւնը ընդհանրապէս luxe մը նկատուած է, աւելորդ բան մը, և շատ շատ ներելի միայն անոնց համար որ հարիւր հազար զրուշ rente մը ունին տալին:

Գործի, շուկայի, դրամի մարդեր ըլլալու մեր կատաղի եռանդին մէջ կը մոռնանք թէ աշխարհի մարդ ըլլալն ալ անհրաժեշտ է սեւեռեալ չելլելու համար այն ընկերութեան մէջ ուր կապրինք:

Բաւական չէ գիտնալ բոլոր գաղտնիքները վաճառականութեան, բոլոր խաղերը սակարանին, բոլոր դարձուածքները սեղանաւորութեան, մի եւ նոյն ատեն պէտք է գիտնալ թէ՛ ինչպէս պէտք է համբուրել կնոջ մը ձեռքը, ինչպէս պէտք է խօսիլ օրիորդի մը հետ, ինչպէս և ինչ ձեւով պէտք է առնել կնոջ մը կողմէ մեծարուած գաւաթ մը թէյը

և այն ամէն պղտիկ բաները՝ որ աշխարհիկ կեանքը կը կազմեն:

Երիտասարդներ գիտեմ ես որ *fureur* կը նեն առեւտրական հրապարակին վրայ: Եւ ըստ այլմէն *credit* ունին, հրեաներու ճարպիկութեան վրայ կը խնդան, յոյներու հետ կը մրցին, քանի մը անգամ Բարիզ գացած եկած են, լաւ կը հագուին, լաւ կ'ապրին, բայց եկու տես որ կիկօի ձեւեր կ'առնեն, տգեղ շարժումներ ունին, բերանին չեն բանար, *compliment* մը չեն կրնար դարձնել, բարեւելու խոնարհելու մէջ դժուարութիւններ կ'զգան և կը կարմրին երբ օրիորդ մը երկու անգամ իրարու վրայ երեսներն կը նայի:

Հանդիպեցէք անոնց պարահանդէսի մը մէջ, և պիտի տեսնէք որ պատերու տակ կը սլքտան, շատ ծանօթ աղջիկներու հետ միայն կը պարեն, բնաւ չեն խօսիր հետերին, և երբ չքասեղանին կը մօտենան՝ նախ իրենք կ'սկսին ուտել և ապա կը հրամցնեն *sauvage* նուն: Շուկայի կեանքը սպաննած է սալօնի կեանքը: Ինքզինքնին չեն ուզեր նեղել, փայլելու փափաքը չունին, և կարեւորութիւն չեն ընծայիր երբ իրենց համար կըսուի թէ՛ պանա պաֆներ են լոկ:

Կիներու հպումը վախ կազդէ իրենց, *flirt* մեղք մը կը համարին և *danse tournante* ները աւելորդ յոգնութիւն մը: *Tenue* ըսուած բանը բնաւ չէ չարչարած իրենց միտքը, և հարսնիքի կերթան այն հագուստով՝ որով Եւրոպացիները Մէնէմէն կերթան պոռոյի համար: Զերմակ բանթալոնով մեռելի դացողներ շատ կան:

Անշուշտ խօսքս այն կարգի երիտասարդներու համար չէ որ ուզած վայրկեաննուն սեւ հագուստ մը չեն կրնար գտնել իրենց հանդերձարարակին մէջ: Ասոր փոխարէն կը կառողիս սակայն երբ այդ պակասը կը տեսնես այնպիսիներու վրայ՝ որոնք ամէն դիւրութիւն ունին կեանքի մէջ *correct* երեւնալու համար:

Օրինակ մը տամ ձեզի այն անփութութեան վրայ, այն ճաշակի պակասին վրայ՝ զոր շատ մարդիկ ցոյց կ'ուտան նմանօրինակ հանդէսներու մէջ:

Երեկոյթի մը մէջ յայտագիրը որ ամէն հանդիսականներու ձեռքին մէջ դրուած էր,

կը ծանուցանէր թէ հանդէսին գրական մասէն անմիջապէս ետքը *sauterie* մը տեղի պիտի ունենար: Որոշեալ ժամուն սրահին մէջ՝ զետեղուած աթոռները կը վերցուին և առաջին *valse* կ'սկսի: Չպիտի հաւատաք եթէ ըսեմ թէ այդ պարասրահին մէջ ուր իգական սեռը այնքան խնամեալ արդուզարդեր կը կրէր, և որոց շատերը *en chevaux* կը պարէին, հոս հոն կայնած տեսանք երիտասարդներ՝ ահագին բալթօ մը վրանին, գաւազաններն ձեռքերնուն մէջ, գլուխնուն վրայ գլխարկնին, բերաննին սիկառա մը և *pour comble*, բանթալոննին ալ հանգրիճուած:

Այս *tenue*ով որսի գացողներու հանդիպած եմ՝ բայց երբեք պարահանդէսի: Երեւոյթը յուսահատեցուցիչ բան մը ունի իր մէջ, և կարծէ որ անդրադառնանք անոր վրայ: Տիկիներ և օրիորդներ մեր լաւագոյն բնտանիքներուն պատկանող, շարաթներով կը յոգնին, կը տանջուին հանդէս մը կը կազմակերպեն, զոհողութիւններու առջեւ չեն ընկրկիր փայլուն և փառաւոր ընելու հանդէս մը, որ կազմակերպուած է նպաստելու համար գլխութեան յարկի մը գոյութեան: Եւ այդ աղւոր հաւաքումը Ղալաթիոյ պալօի մը, *faux* շանթաքի մը *bal Bullier*ի մը եւրեւոյթը առնէ՝ շնորհիւ այդ խումբ մը հերիքներու, որ պարահանդէսը բանաեիրի մը հետ կը շփոթեն:

Կենցաղագիտութեան մեր պակասին յուսահատեցուցիչ մէկ օրինակը երբեք այդքան ցայտուն կերպով աչքի զարկած չունէր:

Կը հասկնամ թէ սեւ հագուստ մը ունենալու համար դրամի կը կարօտի մարդ, բայց ատանկ միջավայրի մը մէջ գլխարկով և գաւազանի ձեռքին կենալու համար մարդս Պուլխարայի մէջ ծնած ըլլալու է: Ըսի և կը կրկնեմ, պէտք է որ գործի, չուկայի մարդ ըլլանք, բայց նոյնքան պէտք է նաեւ աշխարհի մարդ ըլլալ, կենցաղագէտ, *galant* և բարեկիրթ:

Կեանքի նպատակը միեւնոյն դրամ գէլել չէ, ապրել ալ գիտնալու է մի եւ նոյն ատեն: Ինքզինքը յարգող և յարգուիլ ուզող մարդուն պարտականութիւնն է այդ:

ԲԵՐԱՑԻ ՕՐԻՑՐԴԻ ՄԸ ՕՐԱԳԻՐԸ

ԴԵՂԻՆ ՏՕՄԻՆՈՆ

Քառակուսի, կոկիկ կահաւորուած սենեկի մը բազմոցին անկիւնը, մազերը ցիրուցան, չլիտի ըսուելու չափ ցեղիքի հագուստներով, գլխիկոր և շուտափոյթ՝ soufles մը կաշուով զբաղած էր տարեկից մտերմութիւններէս մին երբ անսակնալ կերպով ներս մտայ սենեակէն:

— Աղէկ որ եկար հոգիս, ըսաւ ան, փոխանակ մարմինին՝ աչքերը միայն շարժելով զիս տեսնելուն, աղէկ որ եկար, սա տանութէն յարմար է արդեօք ... չեմ գիտեր ինչ որ ունէի գործածել ուզեցի ...:

— Տօմինս կը կարեմ, հարցուցի զարմացած և պիչ պիչ իրեն վրայ ձգե ով ակնարկը ...:

— Այո՛, խուշ, ինչո՞ւ կը զարմանաս, այո՛, տօմինս կը կարեմ կ'որ, հասցնելու համար այս գիշերուան պարահանդէսին ...:

— Բայց ...

— Հասկցայ, ամուսինս, Լեւոնը ակնարկել կուզես ... ըսաւ վայրենի անհոգութիւն մը և անզգայ անտարբերութիւն մը ցոյց տալով, ալ անիկա իրեն համար, ես ալ ինծի ... քիչ մըն ալ այս կեանքը պիտի փորձեմ ...:

Կանացի հետաքրքրութեանս գոհացում տալու համար յառաջ տանիլ ուզեցի հարցումներու շարքը, փափաքելով թափանցել ընկերութիւն խախտու վիճակին, որուն մէջ գառնութիւն մը կը նշմարէի, ու,

— Ամուսնական կեանքիդ և ընտանեկան երջանկութեանդ վրայ տիտուր ստուեր մը կը տեսնամ, սիրելիս ըսի, մօտիկը նստելով, ինչ բան զքեզ կը մղէ ամուսնական առաջին տարիիդ իսկ չեղիլ անոր պայմանադրական օրէնքներէն ...:

Մտերմութիւնս պահ մը ճակտէն ի վար ցիրուցան մազերը ժողուելով, ու արցունքէն

խոնաւ աչքերը վրաս սեւեռած, մէկդի նետեց տօմինոն և ասեղը, ու աւելցուց.

— Երջանիկ ես հոգիս, հարիւր անգամ երջանիկ ես ամուրի, ազատ կեանքիդ և օրերուդ մէջ, գիտցիր յարգը այդ թուշունի անկառ և անկախ վիճակիդ, ուրկէ զրկուած եմ հիմա: Ամուսնութիւնը ովկիանոսին բացերը լուսավառ փարոս մը կարծելով, ամուրի կեանքիս փրկութեան համար զէպի այդ լուսաշող ապաստանարանը՝ ցամաք օգտուիլ ուզեցի ...: Այդ փարոսը՝ անդնդախոր վիհի մը բերանը կառուցուած մեծ վտանգի մը աղղարար նշանն է եղեր, և հոն ճառագայթող աչքառու լոյսը՝ ոչ թէ իրեն մօտենալու այլ իրմէ հեռու փախչելու համար ըլլալը ... աւաղ որ անկումէս վերջը զգացի: Վիհը ամուսնութիւնն է եղեր, հոգիս, ու փարոսը անոր ձգտումը:

Ընկերութիւնս ալ չի կրցաւ շարունակել խօսքը, հեծկտաց, լացաւ ծունգերուս վրայ ու համբոյրներով ծածկեց այտերս: Ու մինչ կը պատրաստուէի մխիթարական խօսքերով մղձմանել իր բարոյական ցաւերն ու մտատանջութիւնները, յանկարծ տեղէն յատկելով քօնսօլին մօտեցաւ, ու հոնկէ ճմռթկած թուղթ մը առնելով կրկին եկաւ նստիլ մօտս:

— Դուն բարեկամուհի մը, մտերմութիւն մը, կամ քոյր մը չես ինծի համար, դո՛ւն այն հրեշտակներէն ես՝ որոնք մարդու կերպարանքով կուգան սրտակցիլ ինձ պէս անմեղ զոհերու հետ: Տես, սենեակ մտնելուդ, զարմացար ձեռքերուս մէջ soufles մը տեսնելով, հիմա պիտի պարզեմ ատոր գաղտնիքը, որպէս զի համոզուիս թէ՛ կին մը ճամբէն չեղեցնողը միշտ ամուսինն է, ա՛ն տեղի կուտայ միշտ, հետեւաբար մեղքն ու ամօթը իրեն: Կարդա՛ սա երկտողը և իրաւունք տուր ինծի:

Բարեկամունիիս այս անակնկալ վիճակէն զգածուած, հապճեպով բացի թղթիկը, որուն մէջ կանացի նուրը ու մաքուր տողեր մը գրուած կային: Ու սկսայ կարգալ հետեւեալը:

Սիրելի Լեւոնս,

Թեեւ քիչ մը սկաւ, սակայն քու հրաւերդ չի մերժելու համար պիտի գամ: Ժամը երես վեցին պարահանդէսին դուռը զսնուէ, ես կառնուի կը հասնիմ ու քեզի չեմ սպասցներ: Դեղին ծովինս պիտի ըլլայ հագուեստս սեւ մասեկով:

Համբոյրներ

ԱՐԱՔՍ

...
Պահ մը քարացած մնացի, նախ չուզեցի հաւատալ իրականութեան մը՝ որ արեւին պէս պայծառ էր ձեռքիս տակ, աչքիս առջեւ:

— Տեսա՞ր, համոզուեցա՞ր, քոյրս, ըստան աչքերը սրբելով, այս գիրը գորդը հոմանունին է Լեւոնին, ինչպէս կուտեցի, և դուն ալ կը հաստատես անշուշտ: Այս առաւօտ անգգաւարտ գրականէն ձգեւ է ննջասենեակին մէջ: Գտա՞յ ... երանի թէ չը գտնէի, որովհետեւ էրիկմարդոց մանաւանդ ամուսնացեալ այրերուն այս տեսակ շահատակութիւնները, գաղանթութիւնները չիմանալը չգալը աւելի աղէկ է մեզ կիներուն համար, քան թէ տեղեկանալ այդ կարգի զգլխիչ արարքներուն:

— Շատ աղէկ հոգիս, ընդմիջեցի, ամուսնիդ պարտադանդութիւն մը կ'ընէ, կը շեղի իր նուիրական կոչումէն, կը հասկնամ, բայց այս դեղին ծովինս ինչ պիտի ըլլայ արդեօք ...:

— Այո՛, այո՛, ակն ընդ ական, հոգիս, ճիշտ նոյնը ընկու չափատակ ունիմ: Պիտի երթամ, ես ալ պիտի գտնուիմ այս գիշեր այն պարահանդէսը մօտէն դիտելու համար այդ եռուզեռ աշխարհը, որ մեր ամուսնական աշխարհէն տարբեր անուշութիւն մը ունենալ կը թուի ...:

— Բայց անուշա, խօսք առի կրկին համոզական խօսքերով արգիլելու համար բարեկամունիս, որ ամուսնայ մը զոհը կ'ուզէր ըլլալ, բայց գիտնալու ես որ դուն ալ պի-

տի կրես այն մեղքը՝ որուն մէջ մխրճուած է ամուսինդ:

— Շատ ճշմարիտ է այդ, պէտք է որ երկուքս ալ մաքուր ապրինք և կամ ...:

Հասկցայ թէ բոլորովին գաղափարը փոխած էր ընկերունիս, նախկին իրաւական տեղ ցոփունի մը սկզբնական գաղափարներով տողորուած իրէն մը դարցած էր իմաց, և ինչ որ ըսէի, ինչ ձեւով որ խօսէի՝ արդիւնք մը չպիտի կրնար ունենալ, ուստի ձգեցի որ իր մտադրած ձեւով գործէ, ու երբ կարեկցօրէն հրաժեշտ կառնէի իրմէ, վարէն դուռը դարձնելով՝ մինեան սպասուհին եկաւ իմացնել թէ ամուսինը այդ իրինկունը մինչեւ կէս գիշեր չպիտի կրնար գալ ստիպողական գործի մը պատճառաւ:

...
— Ալ կասկած չը մնաց, այնպէս չէ՛, ըստ արցունքով լեցուն աչքերը վրաս ձգելով, ուրեմն ժամանակ չ'անցընիմ, կարիս սկսիմ, որպէս զի կարենամ հասնել, ու կրկին ձեռք առաւ դեղին ծովինս:

* * *

Երանի թէ այդ օրը այցելած չըլլայի իրեն, ու մօտէն ակնանտես չըլլայի ամուսնական կեանքին տխուր դառնութիւններուն որոնցմով կը տանջուին կը մաշին շատ մը զոյգեր: Դեռափթիթ օրիորդներ հօգի կուտան ամուսնական սեմէն ներս ոտք դնելու համար, և անգամ մը որ իրենց մուտքը ըրին, ալ տառապանքը, տանջանքը սրտնեղութիւնը դիտող տարբեր կ'ըլլայ ու իրենք կը խամրին կը փթանան թեթեւ խաղալիք մը դառնալով ամուսիններու քմահաճոյքին նըշաւակ:

Արդէն ուխտած էի չամուսնանալ, և հիմայ որ մօտէն, շատ մօտէն տեսայ ամուսնութեան տանջող միացնող դառնութիւնները ... երբեք չպիտի ուզեմ այդ կեանքը որ թոյնի պէս՝ թէեւ նախապէս անուշ, սակայն վերջէն մահ կը սպառնայ:

Չեմ գիտեր թէ բարեկամունիս իր դեղին ծովինոյով կրցա՞ւ դատ մը տալ իր գաղան ամուսնոյն ...:

Չեմ յուսար:

ՋԱՋԱ

ԿԻՐԱԿԻԻ ՑԵՐԵԿՈՅԹԸ

[ԳՕՆՍԷՌԱԲՈՅՐ ՅՕԴՈՒԱԾ]

— Ա՛յո՛ կիրակի ...

— Չէ՛ գալ կիրակի ...

— Բայց սուրբ աղբիւրէ իմացա՛յ որ ...

— Մասնախմբին մէկ անգամը ըսաւ որ ...

— Կարծէ՛մ օղէն կախում ունի ...

— Այո՛, օղին պիտի նայինք ...

— Ըստ իս, սոմաակները տեղաւորելու համար մէկ երկու օր եւս յետաձգեցին ...

— Chute !

— Զի՛ւթ ... դուն այնչափը գիտես ...

Ահա խօսակցութեան նիւթը տուներու, վաճառատուններու, թուակայի, շոգենաւի, թիւնէլի և նոյն ինքի ... Au Lionի ասանսօ-
ւին մէջ, մինչեւ չաբաթ կամ անկէ քանի մը օր առաջ, երբ լրագիրները իրենց օրհնած բերանը բացին հրաւեր կարգալու կուս բռն-
նող ղառակարգին թէ՛ ժամանակէ մը ի վեր մտքերը զբաղեցնող, սրտերը յուզող, և նա-
մանաւանդ քաակները յորձանապտակող (°) Օրթագիւղի եկեղեցւոյն ի նպաստ սարքուե-
լիք եռաձայնը — ներքեցէք concert պիտի ըսէի — պիտի արուի՝ 21 ՅՈՒՆՈՒԱՐ 1907
ԿԻՐԱԿԻ ՑԵՐԵԿ ԺԱՄԸ ՃԻՇՏ 8 1/2 ին :

En avant ?

* * *

Յայտագիրը բարձիս տակ ու սոմաակս ալ կուրծքիս վրայ զետեղած, օրհասականի մը պէս կէս քուն կէս արթուն ուսյուցի չաբաթին գիշերը՝ որ անուշ կիրակիով յլի, երկունքի ցաւերը կը քաշէր :

Concert պիտի երթայի, concert պիտի վայելէի, concertին մէջ պիտի ըլլայի, concertին ներկայ պիտի գտնուէի, concert պիտի լսէի, concert պիտի վայելէի, concert, conce ... co ... ու քունս տարեր է ... զիս՝ փոխա-
նակ concertին, մինչեւ Մալաթիա, սիրոս-
սարսուռ բարեկամիս՝ Համբարձում Պէննէ-
եանին մօտ, ուրկէ երեք տարեկան Հանրա-
գիտակի բաժնեգին կը պահանջեմ, այս օր, վաղը, jusqu'à mon dernier soupir ?

Կարծեմ անպատշաճ է հոս ըսել թէ՛ նախ-
թալինահոտ concert-ը. հազուադէպ տա-
կէն օճառաբոյր ճերմակեղէններու ալ քուռ-
սը ուղ ընել տալէ վերջ ժամը չեմ գիտեր
քանիին Ղա աթիայէն թրամվայ ցատկեցի
կառքին ուղղուսուղ 13 թիւը փրկելու հա-
մար :

Շոգենաւին մէջ concert-ները չէր բաւէր
մէյ մալ թուակայը վայելելու պատիւը ու-
նեցայ անոնցմէ մէկ քանի երկսեռ ներկայա-
ցուցիչներու, որոնց՝ սոմաակաւաճառը չի
հարցուց ուր երթալին ... այլ մինչեւ Կա-
լաթա-Սէրայ մէկ մէկ թուղթի կտոր տուաւ
ձեռքերնին, արմանքէ վարմանք տանելով
զիրենք, սրամտութեան կամ մտազուշակու-
թեան տեսակէտով :

Թրամվային մէջ խօսակցութենէն նմոյշ՝ մը
— Ուշ մնացինք ուշ Հոռոփիկ, փապուճ
չակե պիտի երթանք, կըսէր ամուսնանալէն
յոյսը կարծած տասը ֆոանքնոց մը :

— Աման դուն ալ թօհաֆ կըսես, չաեսի
պէս է՛ն առաջ ելթալն ալ շատ աղուոր
բան մը չէ պատասխանեց գերեզմանէն փա-
խած սփէք մը որուն երեսը նայած ըլլալուս
համար մինչեւ հիմա կը զղջամ :

— Էօֆ ... կ'եղիմ կոր ... զիսնայի
սաանի աղուոր օր ընելը, տակէս ֆանէլան
կը հոնէի ... հոս ասանկ է նէ նե՛րը ինչ
է արդեօք ... :

— Ինտոր մուցանք Ֆիլօմէնին օսկօռլու
էլլազէն ուզելու, ետնի տիրէկ կը անկէի
ամէնուն մէջը :

Մօտերնին նստող քավալին որ նոր
փեսայի մը պէս հագուած էր, խօսք կ'առնէ :

— Հազար անգամ ըսի քի Յուսեփ աղա-
յին պիլէթն ալ առնենք տէյի, դուն էլ փա-
զէզ կը մամուսս կոր, ես ալ հոնտեղի
խախլութիւնը միտք կը բերեմ կոր քի
երկու պիլէթով երեք հոգի նաալ՝ պիտի
մտնանք ... :

— Ընհ... ես ալ գիտեմ քի բան մը պիտի ըսես... մէկերնիս դուրս ձգելու չե՞ն ես...

— Հիմա ատ ձգեցէք ես', Արթաքի, վար իշնանք նէ, ածապ բէռութեարի խա- նութ մը մտնանք տէ մէյ մը այնան նա- յի՞նք... տունէն աղէկ էլանք ամա վախնամ մաղերս բիւրիւզ բիւրիւզ կախուեր են...

— Տահա նէլէր, մինք ուշ մնացինք կսենք կոր դուն ալ նորէն թուալէթի կ'ել- լաս կոր... կ'ըսէ մըսին գրպանէն պատ- ըաստ սիկառ մը վառելով.

— Մէյ մը երեսո նայէ նայիմ Սուր- բիկ...

— Բէք աղէկ է, հիշ չէ աւրուեր... դուն ալ ինծի նայէ նայիմ...

— Շաբաղ երկու մատ վեր առ սո- լէդ... Արթաքի դուն ալ քաւալածդ չըտ- կէ, պըլըններդ ալ վեր վեր ըրէ հէմ ալ սրբէ, կերած մախառնայիդ բանիւրին փոռ- ները բիւթիւն վրան են մնացիւր...

Այսպէս կը համինք Բըթի շանի առջեւ ուր թրանվայը կը կինայ ու շատեր վար կ'իջնան ինչպէս նաեւ ես մղաւորս:

Ներսը տէքօը ճաշակաւոր է: Մամա- խըմբին մածայարդ անդամները իրենց պատ- կառելի ներկայութեամբ ակամայ ակնածել կուտան ներս մանողը. մինչ քի մը ներսը չիք երիտասարդներ ամենայն քաղաքավա- րութեամբ աթոռ ցոյց կուտան հեւ ի հեւ հասնողներուն, բոլորն ալ նիւմէռօթէ:

Չեմ գիտեր ինչու երբ այսպէս ցերեկոյ- թի մը կամ երեկոյթի մը մէջ գտնուիմ, իմ բաղդէն թէ ընթերցողներուս բաղդէն, անպատճառ ուղումպիկներէ կը շրջապատ- ուիմ որոնք լարուած կուսօֆօններու պէս իրենց խօսակցութիւններով կուգան այս էջերը լեցնել առանց յոգնեցնելու զիս նիւթ որոճալու համար:

Ժամը ճիշդ ութն է երբ ներս կը մտնեմ սրահէն ու կ'երթամ գրասեղ աթոռս որ ՄԻՄԻԱՅՆ ինձ կ'սպասէր:

Սովորութիւն եղած է՝ նոյնիսկ հանդէս- ներու կամ թատրոններու մէջ, անգամ մը որ մարդ աթոռին վրայ կամ օթեակը նստի, կ'սկսի աչքը չորս կողմը պտտցնել, ո՞վ կայ ո՞վ չիկայի սօցածը ընելու համար: Ես այդ

ծուիկ սովորութիւնը չունիմ, ես չորս դիս կը նայիմ այն ատեն միայն, երբ վարագոյրը բացուած է ու ամէն ոք զբաղած: Եւ կար- ծեմ թէ շատ ալ անխելք չեմ հէ՞...:

Tout Péra և tout Ortakoeuy հոն են, հոն են էին շաբխաճի Բառէ, Մառկոիթ, կարկարող Շրիկէլ, ճանփէսճի օ Լիոն և խարճավաճառ Տոօն իրենց ապրանքներով միայն իրենց զոյերով պիտի ըսէի բայց թող չըսած ըլլամ: Այնպէս որ եթէ այս con- certին առթիւ եկեղեցւոյ մետուկը 300 ոսկի մտաւ, 1300 ոսկի ալ մտաւ թուալէթի քոյքեր ծախող վաճառատուներու դրամարկները, սկսեալ ինձմէ որ 27 դրշ. միայն փողկապիս տուի... անցեալ տարի:

Ներսը ահագին սրահին մէջ դեռ ցերե- կոյթը չսկսած, զիրար դիտելու հայ սովո- րութիւնն է որ կը շարունակուի. դիտողու- թիւններ, չի հաւնելներ իրարու կը յաջոր- դեն, մինչ մէկ կողմէ թատրոնը կը լեցուի բազմութեամբ:

Վերջապէս:

Այո', վերջապէս նուագահանդէսը կը սկսի ինչպէս նաեւ ես-գիտեմճիւղական քոի- թիքը:

— Սանկ ըլլալու էր...

— Նանկ ըլլալու էր...

— Ինծի մնար նէ անանկ կ'ընէի...

— Ինծի հարցնես նէ անանկ ըլլալու էր...

— Ինծի կը հարցնես նէ...

Քեզի բան մըն ալ չեմ հարցներ զու- ուապ, ըսելը կուգայ մարդուն այդ կարգի չպիտոյ դիտողութիւններ ընողներու հաս- ցէին, որոնք ուրիշներու տոմսակովը եկած բազմած եւ հող և ամենէ՛ աւելի պահանջ- կոտութիւն ցոյց կուտան:

Մինչ այս մինչ այն յայտագիրին նիւմէ- ոսները իրարու կը յաջորդեն կանոնաւորա- բար ու մօտս նստող գաւառացի մը մշիկ մշիկ կը քնանայ, քովը նստող ընկերը զայն մշտելով,

— Ծօ Բա՛րսեղ աղա, էօրի կը քննա- նաս...

— Հապա ի՞նչ անիմ... աս վըրթո՞ւն տի մտիկ անիմ...

— Հէլէ մէյմը աշուիդ սրբէ իւ, տա ախ-

չինակը նայե ինտոր մասնառայի պէս կու
չա է աղ զըռլթըն...

— Օ տէյիլ ամա, ճիղարա մի փաթթիմ
աճապ, օր խելքս գլխիս դայ...

— Գիտնալս ետսախ ի...:

— Ծօ՛ ի՞նչ ճիվերս կուտին. խոշ եկե-
ղեցիին հըմար է իսէ տէ, հոս եկեղեցի չէ՞
եա, տիւն սա վաթսուներորդ տիւր օր լը-
րիմ...:

Եւ ասոնց մօտը նստող ղեռափթիթ օ-
րհորդ մը հաշիւ տաճնեութիւնը տարեկան՝ երի-
տասարդի մը քով նստած կը տեսակցի:

— Կարծեմ թէ դաշնակէն աւելի դար-
նողին ուղղած էք ձեր աչքերը...:

— Ի՞նչ կ'ըսէք... Դէ միթէ կարե-
լի՞ է...:

— Ձեմ գիտեր բայց հատածնուս ի վեր
ինձ հետ չէք վերաբերուիր կոր...:

(Հասկցայ թէ նշանած էին և թէ հայ
նշանածներ (°)):

— Երկու անգամ թեւս թեւիդ մէջ ան-
ցնել ուզեցի՝ թող չի տուիք...:

— Ձըլլալիք բաները հարկաւ թող չեմ
ի տար...:

— Բայց չէ՞ մի որ նշանած ենք հոգիս...

— Արդէն ատենէ մը ի վեր պաղութիւն
մը կը նշմարեմ կոր ձեր վրայ, խօսք կառնէ
օրերդը, փոխանակ բեմ նայելու՝ կուրծքի
տանթէլներուն հետ խաղալով...:

— Երիտասարդի բաղադրանքներ...:

Երիտասարդը ալ աւելի ծռելով իր բու-
բէին:

— Ձեռքդ տուր...:

Կարծեմ թէ ոչ մէկ դիւցազն(°) պիտի կըր-
նար հանդուրժել ու շարունակել դիտել այս
զոյգը, քանի որ...:

Առաջին բառիին աւարտելուն, դուրս
կելլամ սիկառ մը վառելու համար ներսի
ֆիւմուսը, ուր արդէն լեցուն են ծխամոլ
հանդիսականներով:

— Tiens Լիւա, ըսելով ձեռքս կը սեղմէ
երիտասարդ մը, զոր չեմ ճանչնար je jure
sur ma vie.

— Salu, կըսեմ ձեռքս երկարելով ան-
ծանօթ բարեկամիս, ալ աւելի մօտութիւն
մը ցոյց տալով:

— Ի՞նչպէս գտաք հանդէսը, կը հարցնէ,
բան մը ըսած ըլլալու համար:

— Արդէն չէ՞ մի որ Բըթի Շանի մէջ պի-
տի սարքուէր... վայրը անծանօթ չէ կար-
ծեմ, և գտնելը դիւրին... պատասխանեցի
քիչ մը քաշքշելու համար:

— Ա՛... միշտ զուարթ, միշտ սրամ-
տութիւն... ես աւելի նիւմէռօ՛ւերուն հա-
մար կուղէի ըսել...:

— Շատ օրինաւոր, ճիշտ տոմսակին նիւ-
մէռօն տարին նստեցուցին զիս ու պիտի մը-
նամ հոն մինչեւ որ կառսօնները սկսին պըր-
պըտել չորս դին ինկած պռօշ մը և կամ
կորսուած բօթմօնէ մը գտնելու համար...:

— Ախ համակրելի բարեկամս (բարեկամ
ալ եղանք, առանց Ղալաթիոյ պողաչաճիին
քովէն ջուր մը իսկ խմելու) պիտի խնդրէի
որ, (ու սկսաւ ուրտէնկօթին գրպանները
պրպտել) պիտի խնդրէի որ եթէ յարմար գա-
տէք սա (թուղթերու ծրար մը երկարելով)
յօղուածս տպելու շնորհն ընէիք...:

— Ի՞նչ նիւթի վրայ է ձեր գրածը...:

— Միլտօնի «Կորուստ դրախտին»ին վրայ
քննադատական մ'է...:

— Ամենայն սիրով, բայց Les annales po-
litique et litteraireին հետ ծանօթութիւն
չունիմ, ապա թէ ոչ ձեզի կրնայի օգտակար
ըլլալ...:

— Բայց ես կուզեմ Հանրագիտակի մէջ
երեւնալ...:

— Օ՛... կը ծաղրէք... կըսեմ սիկա-
ռս քաշելով...:

— Շատ լաւ, ի՞նչ նիւթի վրայ կուղէք
որ գրեմ ձեզի, կը շարունակէ մտերիմս, ո-
րուն անունը անգամ չեմ գիտեր...:

— Սկանակ հաւակնոտներու վրայ երգի-
ծական յօդուած մը փորձեցէք, և կարծեմ
պիտի յաջողիք...:

Ու երբ աջս կը նայիմ, արդէն շատոնց
կծիկը դրած է հինգ վայրկեանցու մտերիմս,
պոչը սխմած երկու սրունքներուն մէջ:

Խուժք մը երիտասարդներ կը խօսակցին
անկիւնը:

— Ծօ՛, ան ինչ կէօքս էր...:

— Հապա թեւերը, խօլ խապախի էր գի-
տես քի...:

— Հասըլը տէքօլթէին դործն ալ պաշխա
է, հէ՞ Օգսէն...:

— Ծօ՛ դուն ա՛տ տեսար մինակ, քովս
կընիկ մը կար քի... խոսս լօխմա...:

— Բիանո զարնողէն աղուոր էր ...

— Ծօ՛ ... բիլիճ բիլիճ ... մինակ քիչ մը քրտինք կը հոտէր կոր ...

— Իշտէ ատ չեղաւ ...

— Լեւո՛ն ... դուն պիլէթը ո՛ւրկէ գըտար ...

— Բաթնօնէս առի, մայասըլ է հզեր տէ չի կրցաւ գալու, ... դո՛ւն ...

— Սուս եղիր, պիչիմով մը ներս մտայ ամա, սատկելս բան մը ըսել չէր ...

Նոյն պահուն մէջերնէն մէկը որ կարծեմ զիս կը ճանչնայ եղեր de vue, իրենց մօտեւ նալով,

— Սուս եղէք ծօ՛ ... Հանրագիտակիւն Լիլան կայներ է սըտեղը ...

— Ծօ՛, ո՛ւր է, ո՛ւր է ... մէյ մը տեսնայի ...

Կարծեմ թէ աւելորդ է ըսել՝ այս անգամ ես կծիկը դրի, իմ կարգիս skidauks չըլլալու համար:

Եւ ահա սիւնեալը կը տրուի Բ. բոսկուամին համար ու բոլոր ծխողները, շաղակրատները ներս կը խուժեն, վայ անոր որ հարիւրնոց զըվանալըն նոր վառած էր ... սըրտին պէս:

Ներսը ամէն ոք իր տեղը կը գրաւէ ամենայն կարգապահութեամբ ու վարագոյրը բացուելուն նիւմէնօնները կսկսին իրարու յաջորդել:

Քիչ մը հեռուն — լսելու ատարձան — նուրբ և haute nouveauté հագուած օրիորդ մը մեքենան կը լարէ ու բերանը կը բացուի:

— Այգըրը չէյ մամա, պու գատար աժէլիթէ՞ ...

— Գըզըմ, ալըշմըշ տըրլար, զէնահաթ տըր զէնահաթ ...

— Պիղիմ էտմօն տա չալար ամա, պուրտտքի ելիկանս, ժէսթլէր ագլըմը ուչուրըյոր...

— Մատմազէլ նասըլ պուլույօրսընըզ, ֆօս նօթ եաբըյօր մը ... կը հարցնէ քավալին, որուն օձիկը այնքան բարձր էր որ, գլուխը ձերմակ ֆեսսէի մը մէջ դրածի պէս կերեւար:

— Նասըլ եօգ, մօնչէն, տօլու տօլու ամա էօյլէ չիլին թուռլար եաբըյօր քի, ժը վու զա սիւն, պէլլի պիլէ էթմէյօր ...

— Ախ մատմազէլ, ֆիլօ իլէն պիր աքօմ-

բաներմանտա սիւլ էթմէլի խտինիլ պու քօնսէնտէ, այգըրը չէյ օլուր ըտը ...

— Վու ֆէթ լա ի՛ւն միւ ...

— Տիւ թու ... տօղրուսըն սէօյլէյօրում մատմազէլ ...

Ուրիշներ ալ լսենք քիչ մը:

— Կոողս տանի, ասանկ օրի ալ չուտէյիր ֆարազա ...

— Քա ի՛նչ է կերեր ...

— Հոտը չե՛ս առնիր կոր, սըխորլու բաչա, կըթ ըրած ատենը ներսիդիս վեր կուգայ կոր ...

— Քա ո՛վ ... ցույուր նայիմ ...

— Սա առջեւս նստող էլտոօ շարխալին, պարէ մօտա պիչիմ ալ հագուած չըլլայ ...

— Էօֆ ... հիմա առի հոտը ... բաթլամիշ ըլլան, պարէ տընաչէն, պուտիկ մը օ տը քօլօն առնէր պէրանը ...

— Ան քովի աղջիկն ալ սընըրլըի պէս պիր տիւզ ոտքը կետինը կը գարնէ կոր ...

— Հա՛, ան թէմբօ է, զահէր կիտէ կոր չալած կտորը ...

— Պերնի սխտօրը ...

— Քա աման, ան է եղնը քօնսէն քօնսէն կըսէին կոր նէ ... վայ մտքիս, էյեր բարայով եկած ըլլաի նէ լալս պիտի գար ...

— Ես ալ իրիկուան կերակուր ունիմ տէյի հոգ չըրի եկայ, չէնէ ո՛վ խենթեյր է քի փարայ պիտի տայ ...

— Վերի չօճանները կը նայիս կոր, տիւլպիւններով իրարու սիւս սէյիր կընին կոր ...

— Պաշխա ինչ մոմտուք ունին քի, ինծի պէս իրէքձիին պարտքը չեն մոմտար կո՛ր եա, էրի՛նին կը վապտըկի իրենք կեւուն ...

— Քա ամա տէրտէրս ըսաւ քի, սիրտէնիդ պիտի նեղանայ տէյի ... ինչ է նէ, տա չօճիսին քէման չալելը խօշս կընայ ...:

* * *

Երեւակայեցէք ահագին տակաւ մը, որուն բերնէն փոխանակ հեղուկի, լոյծ մարդահասանքն է որ դուրս կուգայ:

Փօնսէնը աւարտած է հիմա, ամէն ոք քիչ թէ շատ գոհունակ կը ցուին ի չորս կողմունս Բերայի, ոմանք լսած մէկ եղանակնուն դիւրին մասը մուտալով ռալլա ամ, և ոմանք ալ լիաթոք մաքուր օդ շնչելու հա-

մար բերանաբաց քալելով բոօրուառնորու վրայէն :

Ձեր ծառան ալ իր կարգին, հինգնոց չի տալու համար կառքին, կը ցատկեմ թռամ-վայը, ուր բախար կունենամ վայելելու այն պտորնի խումը, զոր պատիւը ունեցայ նկա-րագրել է՛ն վերջը :

— Բա ոահաթը մէյ մը նայեցա՞ր Կիւլիւկ, ուշ չի մնա՞ք ...

— Աման դուն ալ, վարդուով չը պիտի երթանք քի հոգ ընեմ ... Թռամվայ կայ, Օրթագիւղը սրտեղն է ... :

Ու վար կը ցատկեմ crème d'ananasին վրայէն իշկէմպէ չորպատի կերած չըլլալու համար ... :

ԼԻԼԱ

Ա Յ Ր Ը

[ԶՐՈՒՑՈՒԱԾ ՔՆԵՐ]

Այր աշխարհ կուգայ եղանկութիւն, հանոյք եւ կինը վայելելու համար : Մանկու-թեան ասեմ՝ եղանկութիւն, երեսասարդու-թեան՝ հանոյք, իսկ չափահասութեան՝ կինը, կինն է որ գինք կը վայելէ :

— Բնականէն բաւական զգայուն չ'ըլլա-լով այրը՝ քաւ կ'ըլլայ երբեմն ... իր սիրտն ալ ինչ որ սակայն ըսել չէ քե ... քաւայր-ները սիրտ ունին :

— Այր վախճալու հակամէտ է միշտ, ա-սոր համար է որ գիշերը քաւած ասեմ դեւե-րէն կը վախճայ, իսկ ցերեկին՝ ... կնոջ քեւերէն :

— Այրը ներշնչումներու ընդունակ է միշտ : Այս է պատճառը որ երբ բանաստեղծը իր գիրին մէջ ոտանաւորին ... ոտները կը շո-շափէ, իսկ հանդիսատէ այրը իր կիր/ին մէջ ... կնոջ ոտները :

— Այր իր բնութեամբն իսկ այնպէ՛ս մը ստեղծուած է որ առուտուրի հակամէտ է աւելի, մինչդեռ կինը ... աւելի :

— Դիտուած է որ ամէն ոք իր հակառա-կորդին ետեւէն կը վազէ, անա քե ինչու այր մարդը ... դրամին ետեւէն կը վազէ :

— Այրը չամուսնացած նախ հանոյք կուլ կուտայ, ապա՝ ... հով : Այն է պատճառը որ այրերէն շատերը ... հովկուլ կ'ըլլան :

— Այրը երբ սիրէ՝ ամէն բան կը յանձնէ իր սիրունիւն, սնարը քալէ վերջ՝ հանոյք կու-տայ, հանոյքէն վերջ՝ հարսութիւնը, հարսու-թեան վերջ՝ միտք անա քե ինչու ... ան-միտ կըսեն սիրահար այրերուն :

— Այրեր կան՝ որոնք չեն կրնար աղջկան մը սիրտը կարգալ, մինչդեռ կան ուրիշներ ալ՝ որոնք այդ մասին աւելի բաղդաւոր են, վասն զի դպրոցին մէջ ... սիրտը կարգա-ցած են, իսկ դպրոցէն դուրս ... աղջկան մը սիրտը :

— Կան այրեր՝ որոնք յարմար կ'ին մը գտնելու հոգը ուրիշներու կը յանձնեն, մինչ-դեռ կան ուրիշներ ալ՝ որոնք անձամբ կը փնտռեն զայն, եկեղեցիներու, բաժնոցներու, գրասովայրերու եւ նոյն իսկ ... գրավա-նառներու եով :

— Վերջապէս այրեր կան՝ որոնք հայր ըլլալու համար չափազանց բաներու կը կա-րօտին, մինչդեռ ուրիշներ ... միայն Հ գիրին :

— Ամուսնութեան մէջ այրը այն է՝ ինչ որ է խոյրու/սր ու յուրմային համար :

— Այլաճանկային մէջ այրը սամաներու մօտ այն պատշոնը ունի, ինչ որ ունին Սբլան-սիսի կառսօնները յանախորդներու հանդէպ :

— Ամուսնութիւնը շոգեմաւ մըն է, այրը՝ անուխը, կինը՝ նաւապէսը :

— Չորս զաւակով այրին, կենդանի մահն է այրին, որուն ետեւը նայող չըլլար կանացի ոտանին մէջ :

Բերա

ՓԱՅԼԱԿ

ԱՐԵՒԵԼՔ

Օրաթերթ Ազգային, գրական և քաղա-քական : — Բաժանորդագրութիւն՝ տարե-կան Կ. Պոլսոյ համար 80 դրշ. գաւառնե-րու համար 108 դրշ. և օտար երկրներու համար 35 ֆր. : Հասցէ՝ Ղալաթիա, Բաման-տօ փողոց : ԱՐԵՒԵԼՔ հրատարակ կ'ըլլէ ա-մէն օր, կէս օրին, խնամաւ թղթաւորու-թեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լու-րերով ու նորագոյն տեղեկութիւններով :



ԱՆԿԱՊ ԽՕՍՔԵՐ

Երաժշտական աշխարհին

Անշուշտ պիտի հաւատալք խօսքիս, քանի որ հաւատք ունիք, երբ ըսեմ ձեզ թէ, այն երանելի օրը երբ գայ և ինձ աւետեն թէ՝ երկաթուղւոյ վիճակահանութեան առաջին վիճակը ինձ վիճակած է, անմիջապէս առանց վարանելու ու մէջէն տասը փարայի եկեփի իսկ առնելու, ամբողջութեամբ տրամադրելի պիտի ընեմ այն անձին՝ որ կարենայ զիս ծառայականս համոզել թէ, մեր համայնքը (խիտ քիչ բացառութեամբ) երաժշտութիւնէ բան մը հասկնալու ու զայն գնահատելու կարողութիւն ունի։ Այս տեսակ հարցի մը համար այսքան պատկառելի ու ակնածելի գումար մը տրամադրելի ընելըս, ու երաժշտասէր համայնքին բամբասանքի ու բանադրանքին դիմադրելու չափ համարձակութիւն ունեցող մէկուն՝ անշուշտ խենթէ տարբեր բան մը չի գործածուիր, ինչ որ երբեք չեմ ընդունիր ու կը մերժեմ։

Այս կարծիք մըն է, և ոչ ոք կարգիլէ զիս կարծիքս յայտնելէ, կարծիք մը՝ որ կարծեմ կարծուածին չափ կարծօր գլխու մը արտադրութիւնը չէ, այլ ինձ քաւ լիցի պարծիլ, քանի որ միւծ ամօթ մըն է ինքնագոյութիւնը :

Եւրոպական երաժշտութիւն, հմայիչ, թու-
վիչ, գիւթիչ, արուեստ, տաղանդ, ճաշակ,
զգացում, kushk, fkouskf, Լէն. Լէն., և
գեռ շատ մը բանաստեղծական ելերային
բուեր, որոնցմով կոժտենք ու կը յատկանի-
շենք զայն, ու քանի որ պիտի հաւատաք
խօսքիս. ամէն ասեմ ձեզ թէ՝ մենք հարիւ-
րին 90ը ամէն հինգ վայրկեանը անգամ մը
չափազանց բան ողով բերանը, ու օդի ահա-
գին քանակութիւն մը ներշնչելով կայսայի
պէս պիտի ուռեցնէ թուքերը, ու յետոյ զայն
ձայնաւոր կերպով պիտի արտաշնչէ (իմա՝
պիտի յօրանչէ) երբ նոյն իսկ ամենէն նշա-
նաւոր վարպետներ հիասքանչ մօռսօներ
նուագեն, և գիտէք ինչո՞ւ, որովհետեւ մենք
ընդհանրապէս եւրոպական երաժշտութիւն
բուած բանք միայն ու միմիայն աղւորիկ

աղյլիկներուն մէջ քէն բռնելով՝ գիշերն ի լոյս
կամ ցերեկն ի մութ հրել . . . տակային պար
պարել , և երբ պար չիկայ եւրոպական երա-
ժըշտութիւնն ալ մօտիկ ը'ող ու բան մը հաս-
կըցող չիկայ :

Արևուկե կան հրաժեշտութիւն, հեշտալուր, մեղամաղձոտ, զգլխիչ, վերացուցիչ, ֆիլան, ֆալան, ու կապահովցնեմ ձեզ թէ՛ մենէ շատեր արեւելքցի ըլլալով հանդերձ դեռ մոտիկ ըրած չեն ու չեն ալ ընէր, երբ նոյն իսկ ամենէն վարպետ հեղինակներու հիանալի պէսքները ու շաւրքները էլն. էլն. քանի որ մէկ ու կէս աման հարթողի կամ ծթօղի մաքրելէն վերջ կարգ մը քնովուական քանթաներն են, որոնք կազդեն զգացմանց, օրինակ՝ այնպիսի բեմպէ, ա պէնիմ պիւրիմիմ էլն. էլն. :

Է՛հ ուրեմն երթալք բարեաւ ո՛վ արեւել-
եան ու արեւմտեան երաժշտութիւնք, զի
որչափ հեռի են արեւելք յարեւմտից, առչափ
հեռի է ի մէնջ երաժշտական ճաշակ ու դնա-
կատում:

Այս առդերը կը գրեմ կամ գրեցի միմիայն իմ անձնական կարծիքովս, բայց երբ ելլէք ու ըսէք ինձ թէ՛ այս խօսքերդ ամբողջ պարագ խօսքեր են, կրնամ ապացուցանել թէ՛ այս խօսքերուն ամբողջն ալ բառերէ շինուած խօսքեր են, բայց երբ ըսէք թէ՛ դու պօշ մարդ մ'ես, ո՛հ այն ատեն միայն պիտի ստիպուիմ ինձ համար յարմար գործ մը ճարել :

Որով մնամ միշտ Սկիւտար
ԵՐՄՈՎ.

QUADRIL'E NOUVEAUTÉ

Ստացա ք ծանօթ և սիրուած երգչուհան
Յ. Սիւնսեանէ ֆ. Ի 41 երորդ հելվինակութիւն
Quadrille nouveautéն և որուն գեղեցիկ և
արուեստական բոլոր նրբութիւններով օժ-
տուած ըլլաւ կը փրկէ հելվինակին անունը:

Ձմրան սա ամփանեւրուն սարքուած երեւելոյթներու և ինչպէս նաև տանը մէջ զարնելու յարմար այս ընտիր հեղինակու թիւնը յանձնարարելի է ամէն անոնց որոնք կ'ուզեն տաք և չիբ, ճկուն քառուիլ մը պարել :

Ուրիմն փնտռեցէք միմիայն
Quadrille nouveauté

3. ԱԼՓԻԱՐ

[Իզմիրեն մեկնումին առթիւ]

Իզմիրի հայուհիներուն փորձանքը, աշխարհիկ սալօններու և մեր գրական հրապարակին զարդը՝ վերջապէս մեկնեցաւ Իզմիրէն դէպի իր երկրորդ ծննդավայրը, քիչ մըն ալ հոն, Արմաւենիներու երկրին մէջ երգելու համար իր սիրոյ անվերջ պէտքեան, որ ապահովապէս Մարեանինը չէ...

Չորս տարուան երկար ժամանակամիջոցին մէջ, ամէն շաբաթ իր սիրելի բարեկամին՝ Հրանտին թերթին միջոցաւ մեզ համով հոտով քրոնիկներ հրամայեցելէ յոգնած՝ բարձր դասակարգը զուարճացնելէ ձանձրացած Յոյն թոմարուիկ սպասուհիներուն հետ բիսի բիսի փամպուլիսի խաղալէ պժգած, ահա յանկարծ կը բաժնուի մենէ, մեծ պարագ մը թողով իր հեռացմամբ մեր շրջանակներուն մէջ:

Ալփիարին այսքան անակնկալ կերպով մեկման պատճառ կ'ըլլայ հրդեհի այն աղետալի դէպքը՝ զոր այրեց համակրելի քրոնիկագրին բնական պանդուկը, իր հետ այրելով Քրիզանդէմին բոլոր հարստութիւնը կազմող գոյքերը:

Այս պահուս երբ այս տողերը կը գրեմ առջեւս կը պատկերանայ իր այն ողորմելի վիճակը երբ հրդեհէն քանի մը ժառ հոքը գացի գտնելու վինքը Գոստիի գարեջրատան մէջ: Հրկիզեալ երգիծաբանը շրջապապատած էին քանի մը բարեկամներ. որոնք կը փորձէին զինք մխիթարել... գարեջրուրի գաւաթներով: Երբ ձեռքս իրեն երկարեցի, նշմարեցի որ Ալփիարին աչքերը լեցուած էին արցունքով:

—Ա՛հ Ստեփան հեծեծեց այրեցա՛յ լըմընցայ...

—Ինչո՞ւ այդքան կը յուսահատիս սիրելիս ըսի, դուն ողջ եղիր:

—Առանկ ողջութիւն պակաս ըլլայ ըսաւ նոյն շեշտով. հիմայ այս վիճակիս մէջ անիկայ ալ —Հրանտին ակնարկելով— եկեր Թաւաշանճեանին գրելիք պատասխանս կ'ուզէ

կոր, վաղուան թերթին համար. ալ ասկէ հոքը ասանկներուն քերնին հոտը մախի ընել պէտք է...

Ալ անկէ հոք շատ քիչ անգամներ կը տեսնէի զինք: Առաջուան ծիծաղկոտ Ալփիարը չէր, միշտ արտում և յուսահատ այնպէս որ «Ա. Մամուլ»ին իր պայմանադրական յօդուածներն իսկ բարեկամներու և Մամուրեան որդիին ստիպումներուն տակ կը գրէր:

Իր մեկնումին առթիւ երբ այս քանի մը հակիրճ տողերը կը գրեմ, միտքս ակամայ ոտտում թը կ'ընէ Ալփիարի Իզմիր նոր եկած պահներուն, ուր Իզմիրցիք այնքան համակրանք ողջունեցին իրենց երբեմնի կոռուսեալ անառակ որդիին գալուստը: Նոյն պահներուն «Ա. Մամուլ» մէջ հրատարակուած տողերով — Քանի մը օրուան մէջ, Իզմիրի օրուան դէմքը դարձած էր: Սրճարանները, տունները, սալօններու մէջ խօսակցութեան նիւթն էր, Ալփիար հոս, Ալփիար հոն: Իր յօդուածը պարունակող թերթերը ձեռքէ ձեռք կը յափշտակէին. և Իզմիրցիք՝ իրենց գործնական ապացոյց մը իրենց համակրանքին, ոսկիէ թանկագին ժամացոյց մը կը նուիրէին համակրելի քրոնիկագրին Ամանորի առիթով մը: Միայն թէ գրական կողմերէն եթէ պզտիկ թերութիւն մը ունէր այն ալ Հրանդին խօսքին շատ հակին էր... զրաւին սիրոյն: Այս ըսածիս ապացոյցն էր այն քաշքշուքները զոր երբեմն կ'ընէր «Հանրագիտակ»ին նկատմամբ —հակառակ այս թերթին համակիր ըլլալուն— Մամուրեանի քրմիցիներուն խաբրին համար, ինչպէս այս պարագան դիտել տուած էր համակրելին Լիւա, իր Շոգ-մոգ մտածումներուն մէջ:

Սալիհի

Ս. Ս.

Ենթադրէ որ 15 ոսկի ունիս և կը փափաքիս 200 ոսկիի գործ մը լսնալ, տակաւին ինչի՞ պէտք ունիս,

—Դրամօժիտ ունեցող աղջկան մը:

ՅՈՒՍԱԽԱԲՈՒԹԻՒՆՍ

[Թ Ա Պ Լ Օ !]

Անցեալները երեկոյթի մը հրաւիրուած էի :
Երթալ կամ չերթալու վրայ բաւական մը
մտածելէս վերջ, որոշումս տուի իմ ամենա-
բարձր փոքրապատուութիւնս ալ մասնակից
ընել այդ դրոշմատաճարու !!! երեկոյթին :

Ու այդ օրը բաթրոնէս հրաման տւելով
քիչ մը կանուխ կը մտնիմ գրասենեակէս,
երթալիք երեկոյթիս չքուելաբանական պատ-
րաստութիւններս տեսնելու համար :

Իբր ամենէն կարեւորը՝ առաջին գործս
կ'ըլլայ շիտակ վազել Բերա, Մանթար ճառ-
տէսի, Եալանճի փողոց սրբիչ-պէրպէր Սիւ-
րիսինէքեան Վիչէն աղային, ածիլել տալու
համար իմ բարասրգլորգսան իբի սանքիւմիբ
մօրուքս :

— Բարեւ, Վիչէն աղա :

— Օ՛ ... Աստու բարին :

— Հայտէ՛, քեզ նայիմ, գուզում Վիչէն
աղաս, ինծի աղէկ քուտե մը ըրէ, որովհե-
տեւ աս գիշեր երեկոյթի պիտի երթամ :

Սափրիչը որ Տօլապ-տէրէ մեծցած ըլլա-
լուն՝ դրաբառէ չէր հասկնար, երեք ութը
ի՞նչ է, կը հարցնէ անձկութեամբ :

— Սուառէ ըսել կուզեմ, տիխաթը ը-
նես հա՛ ... :

— Փէք աղէկ, քէք աղէկ, ըսելով կը
նստեցնէ զիս սափրիչայատուկ թիկնաթոռի
մը վրայ, ու կը սկսի քուտեյ (?) զիս :

Խանութէն մեկնելուն՝ քայլերս կ'ուղղեմ
միւր տունը, և հոն հազուելաբանութեան ա-
մենակարեւոր գործն ալ տեսնելէս յետոյ, կը
պատրաստուիմ երթալ դէպ ի Չարսընթը փո-
ղոց, ուր կը գտնուի երեկոյթը սարքող սի-
րելի բարեկամիս տունը :

Ժամը երեքն է, և արդէն այդ տան
չախչախը ձեռք է :

Սրահէն ներս մտնելուս առաջին գործս
կ'ըլլայ՝ սենեակին հիւսիս, հարաւ, արեւելք և
արեւմուտք ուղղել իմ ֆլէկլմաթիբ նայուած-
քըս, հոն գտնուող իգական սեռէն ամենէն
գեղեցիկը ինձ իբր քամա ընտրելու համար :

Բազմութիւնը ա՛յնքան շատ է որ՝ զիւ-

րութեամբ չեմ կարող հատ մը ընտրել, մի-
այն՝ ամբողջ այդ խումբին մէջ ներկայ էր
կապոյտ աչքերով, ոսկեգոյն վարսերով,
վարդ տոյտերով, մինիսիկ բերնով, ձերմրկո-
տիկ և Սօֆի անուամբ պարկեշտ աղջիկ մը,
որ իր անհամար բապոյրներովը, գրաւիչ
նայուածքներովը ամենուն ուշադրութիւնը
իր վրայ կեդրոնացուցած էր :

Շիտ սկը խօսելով՝ աչքիս բերնին մէջը
գտնուող գիշատիչ ակունները խածին այդ
աղջիկը : Ո՛րքան երջանիկ և բարեբաղդ պիտի
համարէի ինքզինքս՝ երբ ըստ բաղդի այդ
ժպտաշուրթն պարմանուհին ինձ քամա իյնար,
և ես ալ փոխադարձաբար անոր գալլալիք :

Ժամը ինչն է և տակաւին նոր կը պատ-
րաստուին քանի :

Ու ես որ պարասրահէն ներս մտնելուս
մտադրած էի ամենէն գեղեցիկը (այսինքն
ըստ իս՝ Սօֆին) ինծի քամա ընտրել, չեմ
գիտեր ի՞նչպէս եղաւ որ ապալիս սուրաթով,
բարլալի աչքերով, քուտեքս քիթով, լայն
բերանով, ցցուած ակուններով, խոշոր ա-
կանջներով, այսու հանդերձ բովալուլիկ մարմ-
նով վռթկած աղջիկ մը, չար բաղդէս ինծի
քամա ինկած էր :

— Անունիդ ի՞նչ է, կը հարցնեմ պարած
ժամանակս :

— Թագուհի, կը պատասխանէ :

— Ո՛ւր կը բնակիք :

— Բանկալթի, Սէրսէմ փողոց, թիւ 999
bis :

— Ի՞նչ է աշխատութիւնիդ :

— Գործի չեմ երթար, աղուորս (հէ՛ աղ-
ւորս) :

— Ձեր անունը ի՞նչ է, կը հարցնէ իր
կարգին :

Կը պատասխանեմ.

Խաղէն վերջ քսան վայրկեանի չափ ճիւ-
ռեալիւ տեսակցութիւն մը եւս ունեցանք,
ուրկէ բացայայտօրէն յայտնի եղաւ պարակ-
ցուհիիս ի՞նչ խմորէ շաղուուած ըլլալը :

Մի եւ նոյն խօսակցութեան միջոցին էր որ
ուրիշ օրուան մը համար rendez-vous մը
խնդրեց ինէ, հետս tête à tête տեսնուելու
համար :

Թէեւ շատ վարանեցայ հաստատական
պատասխան մը տալու, սակայն մտվածով

Թէ՛ առաջին սէրը զօրաւոր կ'ըլլայ միշտ, և երկրորդ որ՝ մինչև և այն ժամանակ ոչ մէկը (յոգական սեռէ անշուշտ) երեսն նայած էր գեղեցիկ տղայ մը չըլլալուն, միւս կողմէ «գտածովդ գոհացիր» առածը միտքս բերելով՝ ընդունիլ հարկադրուեցայ սիրուհի-ցունհիս առաջարկը, rendez-vousին օրը և տեղը որոշելով:

Առաւօտուն հետզհետէ սրահը կը դատարկանայ գործի տէր մարդոց մեկնելովը: Եւ որովհետեւ ես ալ գործի ... տէր մէկն եմ, — հոգ չէ Թէ զիւյիւրս տեսակէն —, կը մեկնեմ ապագայ սիրուհիս խապա ձեռքը թոթովելէս յետոյ, անշուշտ մէյ մըն ալ ժամադրութեան օրը զայն տեսնելու համար:

Որոշեալ օրը, որոշեալ ժամուն, ամենամըտերիմ բարեկամներէս Պր. Արամ Ալիւս-եանին հետ կ'ելիմ ժամադրավայրը, սակայն մեծ կ'ըլլայ յոստախարութիւնս, երբ հոն չեմ տեսներ իմ անստգիւտ սիրուհիս:

— Ո՛ւր է, կը հարցնէ բարեկամս Արամ:

— Տակաւին չէ եկեր, քիչ մը նստիմք, մէյմէկ հաւակուրծ ուտենք, հիմա ուրէնէ կուգայ:

Հազիւ Թէ պնակին մէջինը լմնցնելու վրայ էի, յանկարծ կը նշմարեմ սիրուհիս, որ դռնէն ներս կը մտնէ:

— Ահաւասիկ, Արամ, եկաւ, կ'ըսեմ ընկերջս:

— Ա՛ս է ... դէպ ի մեզ եկողը, կը հարցնէ զարմացական շեշտով մը:

— Այո՛, ի՞նչպէս կը գտնէք, աղուո՞ր է:

— Ծօ՛ առիկա, իմ քոյ ... ր ... ս է ...

— Ի՛նչ, քոյրը՞դ ...

— Այո՛, քոյրս, Թագուկը ... քա հոս ի՛նչ բան ունիս ...

Թապլօ !!!

×

Բարոյական. — Կուգամ խոնարհաբար խրատել սեռակիցներս որ ֆոքեզանութիւն չընեն՝ եղբայր ունեցող աղջիկներու հետ:

Բերա

ՍԵՊՈՒՀ Մ. ԱԿՈՆԵԱՆ



Մ Ա Հ ԱՍՏԻԿ ԷՖԷՆՏԻ ՇԻՐԻՆԵԱՆԻ

Հ Ա Յ Ր

ՄԻԶՐԱՆ ԷՖԷՆՏԻ ՇԻՐԻՆԵԱՆԻ

(ԾԱՆՈԹ ՈՍԿԵՐԻՉ ԵՒ ԺԱՄԱԳՈՐԾ)

Երեւաբքի Ս. Խաչ եկեղեցւոյն մեզ մեծ հանդիսաւորութեամբ կատարուեցաւ յուրարկաւորութիւնը՝ ԱՍՏԻԿ ԷՖ. ՇԻՐԻՆԵԱՆԻ, նախագահութեամբ Տ. Մկրտիչ Եպսկ. Վեհապետանի, իր շուրջը ունենալով, Ներսէս վրդ. Դանիելեան, Կարապետ վրդ. Մկրտիչեան, բազմաթիւ քահանաներ եւ դպիրներ:

Եկեղեցին համակ յուսազարդուած էր եւ արարողութեան կարգապահութեան համար ոչ մէկ ջանք խնայուած:

Յուրարկաւորներու հասընթիւ բազմութիւն մը գրաւած էր սահար:

Աստիկ Էֆենտի Շիրինեան՝ իբր ժպար հայր, ոչինչ խնայած էր իր քննանիքին եւ զաւակաց, որոնց վրայ նայելով կը մխիթարուէր իր ծերունի օրերուն մեջ: Վերջին տարիներուն մանաւանդ՝ բոլորովին գործէ փառուած՝ հանգիստ եւ անդորր կեանք մը կը վարէր քննանեկան բոյնին մեջ, շրջապատուած իր սիրելիներէն, որոնց մեծ ցաւ պատճառած է իր կորուստը:

Եկեղեցական արարողութիւններէ վերջ, դազալը նոյն հանդիսաւորութեամբ փոխադրուեցաւ տեղւոյն Ազգ. գերեզմանաւունը եւ մարմինը ամբոփուեցաւ քննանիքին յատուկ դամբարանին մեջ:

Խմբագրութիւնս, խորապես զգածուաց՝ երկնային մխիթարութիւն կը յայցէ, զաւկին՝ Ազն. Միհրան Էֆենտի Շիրինեանի, ինչպէս նաեւ Շիրինեան գերդաստանին եւ պարագաներուն:

ՏԵՌԱԳԻՐ

ԲԸԹԻ - ՇԱՆ . Կիրակի օրուան նուագահանդէսին en flagrant délit հասնող երիտասարդ օրիորդ մը քաղաքէն տոմսակները ամէն օրուան ժաքէթին գրպանը մոռցած ըլլալուն օրիորդին երեսին կարմիրէն հրապուրուող ուրիշ երիտասարդ մը հաւնելով կ'ըսուի թէ այս կիրակի խօսք-կապ պիտի տանին . . . (ինչ անուշ խախկութիւններ կան Ծ. Խ.)

ՆՈՅՆ . — Ծանօթ արուարձանէ մը եկող և ցերեկոյթին ներկայ գտնուող մի քանի ընտանիքներ կարծելով թէ թաղին բաղնիքն է գացած տեղերնին, չըխնդրելով քալէթա, լիմոն և բոթֆալ բերեր են հետերնին, բայց ի տես հայ-լայֆ բաղմոթեան չեն համարձակած քէօռ-կապը քակել:

ՆՈՅՆ . — Շիքութիւնը իճատ ընող երիտասարդ մը, նոյն ցերեկոյթին hors concours բան մը ըրած ըլլալու համար, քրոջը գլխարկին վրայի կեղծ վիօլէթներէն փնջիկ մը կազմելով, ուրտէնկօթին լամբակին զետեղեր է: (Մենք ալ այդ լուրը կը զետեղենք. . . Ծ. Խ.)

ՍԿԻՒՏԱՐ . Տեղացի միւսիւ մը կ'իմանանք թէ, ձիւնոտ օդերուն իր նշանածին այցելութենէն ետ չի մնալու համար պզտիկ եղբօրը պէշիկին քէչէն կտրտելով լաստիկներուն փաթթեր և այնպէս գացեր է աներոյ տունը:

ՆՈՅՆ . — Կիրակիի պայծառ օդէն օգտուող մէկ քանի սօն սիսթէմ երի-

տասարդներ, պտոյտէ աւելի պատուաւ հիններէն հաճոյք զգալու մտօք բեռաթի ըրած միջոցնին առաջին որսին զոհուեր են . . . փառաւոր տըփոց մը ուտելով ֆռէնկին լիւր: Ո՞վ էին արդեօք կրնա՞ք ըսել . . . Ծ. Խ.)

ՍԱՄԱԹԻՈՒ . — Ո՞վ ըսաւ թէ մենք ալ նորութեան հետեւողներ չենք . . . : Մեր ըռէյիզ վարժապետը հոս ծեծի դասընթացք մը բացած է որուն առաջին մրցանակը շահեցաւ աղքատ տղեկ մը . . . և որուն վիճակը ծանր է կ'ըսուի: Ըստ մեզ լաւ է որ՝ այդ վարժապետը, Գասըմ Բաշայի քիւլ-հանը պաշտօնավարէ, քան թէ Սամաթիոյ վարժարանը: Ծ. Խ.)

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ . — Հանդէսիս մը նայուն օգնական խմբագիր կարգուած է բայց ինքը ամուրի է) Տիար Ակոն-եան, որուն սիրուն մէկ զաւեշտականը կ'երեւայ այս թիւին մէջ:

ԲԵՐԱ . — Տօլապտէրէ և իր շրջականները բնակող երիտասարդ ու երիտասարդուհիները Բանորամայի քաղինոյին գոցուելէն ի վեր սիրարանութեան յարմար վայր մը կը փնտռեն. ցոյց տուողին այլալըզի օղին իբր վարձք: Դիմել Մանթար ճատտէսի, Եապանճի փողոց թիւ 111:

Ursofiuskr ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի հասէսի թիւ 52.

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՈՅԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՈՒՄԻ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփաշեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տոկունութեամբ եւ գիներու անմրցելի ածանութեամբը շահած է բոլոր իրեն գիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց բեղուններու եւ տղայոց չիք եւ դիմացկուն ֆաբրիկաներու ճոխ միջերք մը պատրաստ ունի, որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի եւ ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 շրշ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին: 50 — 20

ՄԱԶԻ ՆԵՐԿԵՐ

Մասնագէտ Արամ Էֆէնտի Սօղանճեանի պատրաստած ջուրը քիմիագէտները տարրալուծած եւ քննած ըլլալով, վկայած են թէ՛ ֆլաստա-



ար նիւթերէ բոլորովին զերծ է:

Յիշեալ ջուրը մազերը գունաւորելու համար պէտք եղած գիտական յատկութիւնները ունի եւ այս մասին կայսեր. Բժշկական վարժարանի որոշմամբ ամէն կողմ պէտք եւ

ղած հրահանգները տրուած են, ասկէ զատ ձերիտի Վեգաի Թըպպիլի միջոցաւ մասնաւոր ազգարարութիւններ եղած են:

Այս գեղեցիկ եւ առողջապահիկ գիւտը շատ մը մարդոց կողմէ կեղծուած է, որոնք ազատող ջրիկ ջուրեր պատրաստելով իբրեւ տեղական ազօրանք կը ծախեն:

Եթէ կուզէք բոլորովին մաքուր եւ առողջապահիկ կերպով գունաւորել ձեր մազերը, զգուշացէք այս կարգի աղտոտ ու գունաւոր արջուրերէն, եւ աւելի մաքուրը ու զուտը օնաւոր համար դիմեցէք Մահմուտ բաշա Էֆէնտի, յիշեալ Արամ Էֆ. Սօղանճեանի 12 թիւ անուշահոտութեանց վաճառատունը, ուր պիտի գըտնէք մաքուր ջուր ձեր մազերուն գունաւորման համար:

Կը յանձնարարուի մասնաւորապէս ուշադրութիւն ընել Ա. Սօղանճեան ստորագրութեան:



ԱՌԻԹԵՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղաչ պէյ խանին
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը, որք ուղղակի ներածուելով Սեյիանէ, Զինասանէ, Հնդկասանէ, Ճապոն եւ Ճապոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըրնան գոհանալ թէյերու թարմութեամբ հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յատուկ խառնուրդները, որք կը ծախուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մտաւորին:

Հ Է Ր Ճ Ա Յ Ի

Ա.ՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ չղթայներու, գրպանի պատի և քօնսօլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուններ, նաև ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօաֆիէներ, ամերիկեան կօշիկներ, Ունի նաև կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիլօիկլէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով:

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ շահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար:

Ա. Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել:

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՁՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճերը:

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղք

ՍՍԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-9

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են: